ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (1920-ական թվականների տկիզբ)

Է. Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

1918—1920 թթ. Անդրկովկասում պատերազմի արհավիրքներին ավելացան ազգամիջյան ընդհարումներն ու ջարդերը։ Հայաստանի թաթար (ադրբեջանցի) բնակչության շրջանում թուրքական և ադրբեջանական գործակալների կազմակերպած և հրահրած խռովությունները չդադարեցին հանրապետության գոյության ողջ շրջանում։ Դրանց նպատակն էր քայքայել և թուլացնել Հայաստանի անկախ պետությունը, հող նախապատրաստել այն զավթելու և դրանով իսկ վերացնելու Թուրքիայի և Ադրբեջանի տարածքային բաժանումը։ Թուրքիան և Ադրբեջանը տարածքային պահանջներ էին ներկայացնում Հայաստանի Հանրապետության մի շարք մասերի՝ Կարսի, Լեռնային Ղարաբաղի, Զանգեզուրի, Նախիջևանի, Շարուրի, Դարալագյազի, Բասարգեչարի նկատմամբ։ Իրենց նպատակին հասնելու համար թուրքական գործակալները և Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչները քայքայիչ գործունեություն էին ծավալում ու նենգ դավեր նյութում։

1918 թ. վերջից Հայաստանից թուրքական զորքերի հեռանալուց հետո այնտեղ մնացին ոչ քիչ թվով սպաներ, որոնք ունեին զինված ջոկատներ՝ խռովություններ կազմակերպելու համար։ Միաժամանակ, թուրքերի հեռանալուց հետո ադրբեջանական բնակչության զգալի մասը հեռացավ իր բնակավայրերից, վախենալով, որ հայերն իրենց կպատժեն թուրքերին օգնելու և դանազան մատնություններ անելու համար։ Հեռանալուց հետո թաթարները կազմակերպեցին ավազակախմբեր և սկսեցին թալանչիական գործողություններ՝ սահմանակից հայկական գյուղերի ու զորամասերի նկատմամբ։ Չնայած այդ ամենին, այնուամենայնիվ, շուրջ 30 հազար ադրբեջանցի գաղթականներ մինչև 1919 թ. գարունը վերադարձան և վերաբնակվեցին Հայաստանում։

Միաժամանակ, առաջին աշխարհամարտի և ազգամիջյան ընդհարումների ընթացքում մեծ թվով հայեր արտագաղթեցին Ադրբեջանից (շուրջ 300 հազար մարդ)[1]։ Նրանց հիմնական մասը բնակություն հաստատեց Արևելյան Հայաստանում, իսկ մյուս մասը Վրաստանի վրայով անցավ Հյուսիսային Կովկաս։ Մուսավաթական իշխանության տարիներին հայերի հետ Ադրբեջանից արտագաղթում էին նաև այլ ազգություններ։ Միայն 1918—1919 թթ. արտագաղթի պատճառով Ադրբեջանի ընդհանուր բնակչությունը պակասեց 401,5 հազար մարդով[2]։

Փաստորեն, իրերի հարկադրանքով Արևելյան Հայաստանը, որը պատերազմի տարիներին օթևան էր տրամադրել հայ, հույն, ասորի գաղթականներին, ևս դարձավ արտագաղթի օջախ։

Հայաստանի խորհրդայնացումից հետո սկսվեց հայ գաղթականության և ազգային փոքրամասնությունների վերաբնակեցումը։ Նորաստեղծ խորհրդային իշխանության առջև ծառացան նոր խնդիրներ։ Հանրապետությունում ապրում էին բազմաթիվ ազգային փոքրամասնություններ (ադրբեջանցիներ, քրդեր, եզդիներ, ռուսներ, ասորիներ, հույներ, հրեաներ և ուրիշներ), որոնց մեծ մասին հարկավոր էր վերաբնակեցնել և մասնակից դարձնել Հայաստա-

---

1 Հ. Քաջաղունի, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 12։

2 Վ. Ե. Խոջաբեկյան, Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը (1828—1978), Երևան, 1979, էջ 190։

նի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքին։

Հայրենիքի փրկության կոմիտեն անգամ իր կարճատև իշխանության ընթացքում ուշադրություն դարձրեց ազգային փոքրամասնություններին։ Կոմիտեն 1921 թ. փետրվարի 22-ին հայերեն, ռուսերեն և թուրքերեն հրատարակած իր կոչում՝ ուղղված «Հայաստանի բոլոր ժողովուրդներին» նշում էր. «Ազգային և հասարակական բոլոր այն չարիքները, որոնք գոյություն են ունեցել անցյալում, պետք է վերացվեն և ամենից առաջ պետք է վերացվեն ազգային անհավասարությունը և ազգային թշնամությունները...

Դժբախտաբար, անցյալում քիչ չեն եղել դեպքեր, երբ զանազան վատ ուժեր աշխատել են կռվեցնել Հայաստանում ապրող ժողովուրդներին և նրանց թշվառության վրա կառուցանել իրենց դիրքերն ու հավասարությունը։ Դժբախտաբար, դեռ այսօր էլ կան անազնիվ մարդիկ, որոնք անձնական շահախնդրությունից դրդված կամ քաղաքական մութ հաշիվներով կամենում են վերակենդանացնել անցյալի ցավալի դեպքերը և նորից կրակի և արյան թատերաբեմ դարձնել Հայաստանը։

...Հայրենիքի փրկության կոմիտեն հանդիսավորապես հայտարարում է, որ ինքը թույլ չի տա որևէ ազգային անհավասարություն և ազգամիջյան ընդհարումներ Հայաստանում։ Ազգային խտրություններ հարուցողները պետք է պատժվեն հեղափոխական ժամանակի օրենքներով»[3]։

1921—1922 թթ. սկսվեց Հայաստանից հեռացած ազգային փոքրամասնությունների վերադարձը, որը ծանր վիճակի մեջ դրեց կառավարությանը։ Հանրապետությունը լեցուն էր բազմահազար անօթևան գաղթականներով, հայ գյուղացիների մեծ մասը չուներ սեփական հողակտոր, անասուններ, գյուղգործիքներ, սերմացու և ահա հարկավոր էր տեղավորել նորեկներին։ Այսպես, 1922 թ. մայիսին մեծ թվով հայեր Թավրիզից չէին կարողանում Հայաստան վերադառնալ՝ սակավահողության պատճառով։ Նրանք դիմել էին Հայաստանի կառավարությանը և ժամանակավորապես մերժում ստացել[4]։ 1923 թ. օգոստոսի 22-ին Հայաստանի ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատը (ՆԳԺԿ-ն) Նախիջևանի մարզխորհրդի գործկոմին խնդրում է Թավրիզի 300 հայ գաղթականներին՝ Ագուլիսի և Ջուլֆայի բնիկներին, տեղավորել Նախիջևանում[5]։

1923 թ. Մեղրու շրջանի բնիկները դիմում են տեղական իշխանություններին՝ թույլատրելու արտագաղթել սակավահողության պատճառով։ Նրանցից շատերը մեկնեցին Էջմիածնի շրջան՝ մասնակցելու Սարդարապատի ջրանցքի կառուցմանը։ Այնտեղ նրանք ապահովվեցին հողով և բնակարանով[6]։ Նույն 1923 թ. Անդրկասպյան երկրներում գտնվող նախկին մեղրեցիներն իրենց լիազոր ներկայացուցիչ Անաստաս Գաբրիելյանի միջոցով դիմում են Հայաստան վերադառնալու խնդրանքով։ Հայաստանի կառավարությունը չկարողացավ նրանց տեղավորել հայրենի շեներում և թույլատրեց վերաբնակվել Էջմիածնի գավառի Մեծ Շահրիբար գյուղում[7]։ Դադարեցվում է Հյուսիսային Կովկասից հայ բնակչության վերաբնակեցումը, քանի որ «Հայաստանի տնտեսական ու պարենային վիճակը այնպիսին էր, որ իր տերիտորիայում ոչ մի նոր խումբ ընդունել չէր կարող»[8]։

Միաժամանակ սկսվել էր սփյուռքահայության ներգաղթը։ Իսկ մյուս կողմից էլ ադրբեջանցիները, որոնք հեռացել էին Զանգեզուրից, պահանջում էին իրենց վերաբնակեցնել միայն ու միայն նախկին բնակատեղիում։ Փաս-

---

3 Ուրարթ, 10. VIII. 1990։ 1990 թ. օգոստոսի 10։

4 ՀՀ Նորագույն պատմության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՆՊՊԿԱ). ֆ. 112, ց. 1, գ. 5, թ. 74, գ. 95, թ. 26։

5 Նույն տեղում, գ. 95, թ. 26։

6 Նույն տեղում, գ. 70, թթ. 10, 12, 23։

7 Նույն տեղում, ֆ. 123, ց. 42, գ. 23, թ. 19—20.

8 Վ. Ե. Խոջարեկյան, նշվ. աշխ., էջ 198։

տորեն, Ադրբեջանի կառավարությունն ամեն գնով Հայաստան՝ իրենց «հայրենիք» էր վերադարձնում Ադրբեջան տեղափոխվածներին։ Վրաստանում ապրող էղդիները դիմել էին Հայաստան վերադառնալու խնդրանքով։ Նրանք Վրաստան էին մեկնել Կարսի մարզից (282 հոգի, 48 ծուխ) և ցանկանում էին վերաբնակվել Կոտայքի, Էջմիածնի գավառներում, Աշտարակում։ Վերադարձան 1921 թ. Զանգեզուրի խորհրդայնացումից հետո Սիսիանի Բորիսովկա և Բազարչայ գյուղերից կամովին հեռացած մոլոկանները[10]։ Ի դեպ, երբ հիշյալ գյուղերի մոլոկանները հեռանում էին Շամախիի գավառ, տեղական իշխանությունները ջանքեր գործադրեցին նրանց համոզելու հրաժարվել նման մտադրությունից։ Սակայն ապարդյուն։ Նրանք պատասխանում էին. «Դուք էլ, դաշնակներն էլ հայեր եք, չենք հավատում Ձեզ և չենք ուզում մնալ այս երկրում»[11]։ Նշենք նաև, որ մեկնելուց առաջ նրանք հիմնականում վաճառել էին իրենց ունեցվածքը, բնակարանները։ Այդ գյուղերում վերաբնակվել էին գաղթականներ կամ էլ շրջակա գյուղերից եկած հողազուրկ կամ սակավահող գյուղացիներ։ Այժմ վերադարձել էին նախկին բնակիչները և պահանջում էին իրենց վաճառածը անվարձահատույց վերադարձնել։

1923 թ. Դիլիջանի գավառում ապրող մոլոկանների մի մասը ևս հեռացավ Ռուսաստան։ Նրանք մեկնելուց առաջ քարուքանդ էին անում իրենց տները։ Հայաստանի ՆԳԺԿ-ն այդ ապօրինի քայլերը կանխելու համար Ժողկոմխորհին առաջարկեց ազգայնացնել Ռուսաստան մեկնող մոլոկանների բնակարանները[12]։

Այնուամենայնիվ, Հայաստանի կառավարությունը բոլոր միջոցները ձեռնարկեց ազգային փոքրամասնություններին նախկին բնակավայրերում տեղավորելու, հողով, շինություններով, բնակարաններով, վարկերով ապահովելու ուղղությամբ։ Նախապես նշենք, որ թե՛ հայերի և թե՛ ազգային փոքրամասնությունների ներգաղթը մեծ չափով սկսվել էր, սակայն 1920 թ. դեկտեմբերից մինչև 1921 թ. վերջը դրա վերաբերյալ ճշգրիտ հաշվառում չէր կատարվում։ Այն հիմնականում կրում էր տարերային բնույթ։ Այդ պատճառով էլ հնարավոր չէ ներգաղթողների ստույգ թվեր նշել։

Ներգաղթը կազմակերպելու համար Հայաստանում ՆԳԺԿ-ին կից 1922 թ. հունվարին ստեղծվեց էվակուացման բաժին[13]։ Հիմնվեց նաև վերաբնակեցման հայկական հանձնաժողով[14]։ Հետագայում Հայաստանի Կենտգործկոմի նախագահության 1923 թ. հունվարի 30-ի որոշմամբ ՆԳԺԿ-ի կենտրոնական էվակուացման բաժինը վերակազմվում է վերաբնակեցման բաժնի[15]։ Ամեն ինչ արվում էր գաղթականների վիճակը բարելավելու համար։ Կազմակերպվում էր նյութական, բժշկական օգնություն, հիմնվում էին սննդի կետեր[16]։ Ադրբեջանցի գաղթականները Ղամարլուի հեղկոմին հայտնում էին, որ իրենք «Մակուում և Պարսկաստանում տեղական բնակչության կողմից ոչ միայն չարժանացան եղբայրական վերաբերմունքի, այլև գլխովին թալանվեցին»[17]։

Սակայն վերաբնակեցման աշխատանքները կատարվում էին բավական դժվար պայմաններում։ Բանն այն է, որ կարծես քիչ էր նորից ազգային փոքրամասնություններին Հայաստանում վերաբնակեցնելը, Ադրբեջանի միջամտությամբ Հայաստանում տեղավորված ագերիները փորձում էին Հայաստանից անջատել նաև բնիկ հայկական հողեր և միացնել Ադրբեջանական ԽՍՀ-ին։ Օրինակ, 1923 թ. Մեղրու Նյուվադի գյուղը փորձում է միանալ

---

9 ՀՀ ՆՊՊԿԱ, ֆ. 112, ց. 1, գ. 138, թ. 50—51։
10 Նույն տեղում, գ. 35, թ. 3։
11 Նույն տեղում, գ. 136, թ. 10, տե՛ս նաև ֆ. 123, ց. 16, գ. 112, թ. 3։
12 Նույն տեղում, ֆ. 112, ց. 2, գ. 3, թ. 138։
13 Նույն տեղում, ֆ. 123, ց. 42, գ. 11, թ. 1։
14 Նույն տեղում, գ. 42, թ. 65։
15 Նույն տեղում, գ. 86, թ. 54, գ. 21, թ. 16։
16 Նույն տեղում, գ. 11, թ. 4։
17 Վ. Ե. Խոջաբեկյան, նշվ. աշխ., էջ 195։

Զանգելանի շրջանին։ Մեղրու շրջանի ներկայացուցիչը մեկնում է Նյուվադի՝ գյուղացիներին հետ պահելու իրենց մտադրությունից։ Այդ նույն ժամանակ Զանգելանի շրջանի ղեկավար աշխատողները, այդ թվում՝ շրջխորհրդի նախագահը, ինչ-որ ժողով էին գումարել՝ գյուղացիներից պահանջելով մինչև վերջ պայքարել Նյուվադին Ադրբեջանին միացնելու համար։ Նրանք նաև սպառնում էին Մեղրու ներկայացուցչին, վախեցնելով ձերբակալությամբ։ Ադրբեջանցիները հայտարարում են՝ այստեղ խորհրդային իշխանություն չկա և թուրքից կոմունիստ լինել չի կարող[18]։

Մեղրու շրջանի Շվանիձոր գյուղի մոտ գտնվող ադրբեջանական Թղուտը և Առնաձորը 1923 թ. ևս փորձում էին չենթարկվել Հայաստանին[19]։ Ջեբրայիլի շրջանի գործկոմի նախագահը 1923 թ. սեպտեմբերի 16-ին Մեղրու գավգործկոմին ուղարկած գրության մեջ նշում է, որ Թղուտը հպատակվում է իրենց։ Նա պահանջում է գյուղի գործերին չմիջամտել[20]։ Նախիջևանը պահանջում է Դարալագյազի հարավային հայաբնակ գյուղերը և Մեղրու շրջանում գտնվող Կարճևան գյուղը[21]։

Ընդհանուր առմամբ 1920-ական թվականների սկզբին Զանգեզուրի 30 հայկական գյուղերի հարցը ադրբեջանցիների միջոցով դարձել էր վիճելի։ Բանն այն է, որ Ադրբեջանի ներկայացուցիչները պահանջում էին տարածքային սահմանները կազմելիս ելնել գյուղերի բնակչության ազգային պատկանելությունից[22]։

1923 թ. նոյեմբերի 30-ին Լոռու գավառի Վորոնցովկայի շրջանի Իլազմլու գյուղի 38 ադրբեջանական ընտանիքներ դիմել էին գավգործկոմին՝ թույլատրել իրենց անասուններով և շարժական գույքով մշտական բնակության տեղափոխվել Կարսի նահանգը։ Ուսումնասիրությունից պարզվեց, որ արտագաղթի հիմնական պատճառը այսպես կոչված կլիմայական պայմանները, անբերրիությունը և Թուրքիայում ապրելու ցանկությունն էին[23]։ Փաստորեն, մի կողմից վերաբնակեցում էր տեղի ունենում, իսկ մյուս կողմից իշխանությունները կանգնում էին արտագաղթի երևույթների առաջ։

Հայաստանի կառավարության վարած ազգային քաղաքականությունը մեծապես խոչընդոտում էին սահմանային վիճելի հարցերը Ադրբեջանի[24] և Վրաստանի[25] հետ։ Նման վեճերը հաճախ թանկ են նստել Հայաստանի վրա։ Օրինակ, Քյարքի գյուղը (Վեգի Բասարում), որ Հայաստանի անվիճելի տարածքն էր, բռնակցվեց Նախիջևանին[26]։

Սահմանամերձ շրջաններում մեծ չափով տարածված էին թալանը, անասնագողությունը, ճանապարհների շրջափակումը։ Շատ դեպքերում էլ Հայաստանի կառավարության վարած ազգային քաղաքականությունը ճիշտ չէր գնահատվում Ադրբեջանի կողմից։ Ընդհակառակը, փորձում էին այդ քաղաքականությունը միայն բացասական գույներով ներկայացնել։ Այսպես, 1926 թ. դեկտեմբերին Էջմիածնի գավառի Ուշի գյուղի բնակիչները Ադրբեջանի հողժողկոմատի համաձայնությամբ պետք է տեղափոխվեին Ադրբեջան։ Ուշեցիները նախապես լինում են տեղում՝ Նուխիի գավառի Զայքենդ գյուղում, ծանոթանում վիճակին։ Եվ երբ արդեն կազմակերպված, իրենց ընտանիքներով պետք է տեղափոխվեին, ադրբեջանական իշխանությունները նրանց

18 ՀՀ ՆՊՊԿԱ, ֆ. 112, ց. 2, գ. 1, թ. 5։
19 Նույն տեղում, ց. 1, գ. 230, թ. 24, ց. 2, գ. 1, թ. 4։
20 Նույն տեղում, ց. 2, գ. 14, թ. 19։
21 Նույն տեղում, գ. 3, թ. 4։
22 Նույն տեղում, ց. 1, գ. 280, թ. 22։
23 Նույն տեղում, ց. 2, գ. 3, թ. 162։
24 Նույն տեղում, ց. 1, գ. 5, թ. 7, 28, 41։
25 Նույն տեղում, ց. 2, գ. 3, թ. 41։
26 Նույն տեղում, ց. 1, գ. 280, թ. 22։

Եվլա՛-ի կայարանից հետ են վերադարձնում, հետո էլ հայտնում Անդրժողկոմխորհին, որ Հայաստանում ադրբեջանցիների հետ լավ չեն վերաբերվում»[27]։

Նշենք, որ այդպիսի պատմություն տեղի ունեցավ 1948—1953 թթ., երբ Ադրբեջանի կառավարության պաշտոնական խնդրանքով՝ Քուռ-արաքսյան հողերը ոռոգելու և յուրացնելու նպատակով, Հայաստանի լեռնային փոքր և անհեռանկարային գյուղերի 11,2 հազար ադրբեջանցիներ վերաբնակեցվեցին Ադրբեջանում։ Հետո նրանց մի մասը (2 հազարը) վերադարձավ Հայաստան։ Իսկ 1990 թ. Ադրբեջանից առաջադրված նախկին ԽՍՀՄ ժողպատգամավորները ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանին դիմում ներկայացրին «Հայաստանի ադրբեջանական բնակչության բռնի տեղահանության մասին», որտեղ նենգափոխելով փաստերը, գրում էին. «Հայրենական Մեծ պատերազմի ավարտից հետո, 1948—51 թթ. հայրենադարձված հայերի համար հողատարածություն աղատելու լկտի պատրվակով, Ստալինի և Միկոյանի նախաձեռնությամբ, Հայաստանից բռնի տեղահանվեցին ավելի քան 100 հազար ադրբեջանցիներ, որոնցից շատերը, չդիմանալով ծանր փորձություններին, վախճանվեցին»[28]։ Կարծում ենք, մեկնաբանություններն ավելորդ են։

Հայաստան տեղափոխված ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները 1923 թ. ազատվեցին հարկերից[29]։ Նրանց տրամադրվեց բազմակողմանի օգնություն հին բնակարանները վերանորոգելու, նորերը կառուցելու, գյուղատնտեսական աշխատանքներով զբաղվելու համար։ Այսպես, 1924 թ. մարտի 14-ին ՀԽՍՀ Կենտգործկոմին ուղարկած գրությունում Ջանգեզուրի գավգործկոմը հայտնում է, որ Ղափանում տեղավորված 920 ադրբեջանցիներին համակողմանի օգնություն է կազմակերպվել։ Միաժամանակ նշում է, որ մինչև նրանց պրոբլեմների լուծումը, գաղթականները օգնության խնդրանքով դիմել էին նաև Ադրբեջանի Կենտգործկոմին և ձեռնունայն մնացել[30]։

Միաժամանակ լուրջ մտահոգություն էր պատճառում Նախիջևանի հայության վիճակը։ Ադրբեջանի ազգային քաղաքականության յուրահատկություններից էր ազգամիջյան հարաբերությունների սրման պահերին ցեղասպանության սպառնալիքի ազդեցության տակ այնպիսի իրավիճակի ստեղծումը, երբ իր բնօրրանից բռնազաղթած բնակչությունն այլևս չկարողանա վերադառնալ նախկին բնակավայր։ Այդպես եղավ 1918—1920 թթ. Գանձակի և Նախիջևանի գավառներից Հայաստան եկած հայ գաղթականների հետ։ 135,8 հազար փախստականներից իրենց բնակավայրերը վերադարձան միայն 8,3 %-ը (12830 մարդ)[31]։ Այդ ճակատագիրն ունեցան նաև Շուշի քաղաքի հայ բնակիչները։ Վիճակագրական տվյալներով հին հայկական մարզում՝ Նախիջևանում 1917 թ. ապրում էր 58,5 հազար հայ (բնակչության ընդհանուր թվակազմի 40 %-ը)[32]։ Բայց արդեն 1926 թ. մարդահամարի տվյալներով այդ թիվը շուրջ 5 անգամ նվազեց՝ կազմելով ընդամենը 11276 մարդ[33]։ Բանն այն է, որ 1918—1920 թթ. թուրքական զորքերի և մուսավաթական բանդաների կողմից կազմակերպված ջարդից փրկված և իրենց տուն ու տեղը լքած նախիջևանցի հայերին Խորհրդային Ադրբեջանի և Նախիջևանի կենտգործկոմները 1922—1926 թթ. բազմիցս կայացրած հատուկ որոշումներով, ամեն կերպ արգելեցին վերադառնալու իրենց բնօրրանը, թեև տները դատարկ էին, դռները փակ, հողերն անմշակ։ Ադրբեջանական ԽՍՀ ժողկոմխորհի նախագահ Մուսաբեկովը 1922 թ. հունիսի 24-ին Հայաստանի ԺԿԽ-ի նախագահին հղած հեռագրով հաղորդել է, որ Ադրբեջանի Կենտգործկոմի որոշ-

---

27 Նույն տեղում, դ. 266, թ. 194, 197։

28 Бакинский рабочий, № 23, IX, 1990.

29 ՀՀ ՆՊՊԿԱ, ֆ. 112, ց. 5, գ. 38, թ. 5։

30 Նույն տեղում, ց. 1, գ. 130, թ. 10։

31 Վ. Ն. Խոջաբեկյան, Ցեղասպանությունը Ադրբեջանում (Հայաստան, 4. XI. 1990)։

32 Նույն տեղում։

33 Նույն տեղում։

մամբ «բնակչության մասսայական մուտքը Ադրբեջանի սահմանները» արգելվում է[34]։

1923 թ. Նախիջևանի մի քանի հայաբնակ գյուղերի բնակիչների ներկայացուցիչ Հազարապետ Մելիքյանը դիմում է ուղարկում Հայաստանի Կենտգործկոմին կից սովայների հանձնաժողովին։ Այնտեղ նշվում է, որ Նախիջևանի հայաբնակ 3 գյուղերի 1360 գյուղացիներ մատնված են սովամահության։ Նրանք օգնության խնդրանքով դիմել են Ադրբեջանին, տեղական իշխանություններին, սակայն թուրք-թաթարները օգնության դիմաց նրանցից պահանջել են 15—16 տարեկան հայ գեղեցիկ աղջիկների կամ էլ պահանջել են ընդունել մահմեդականություն։ Այլապես, ոչ մի թուրք չի կամենում անգամ մի ֆունտ դարի տալ։ Շատերը ստիպված սնվում են վայրի խոտերով, շատերը մահանում են։ Այս դիմումին կից ներկայացվում է նաև բժշկական տեղեկանք։ Նրանք Հայաստանից խնդրում են 3—4 ամսվա համար ալյուր ուղարկել Նախիջևանի հայությանը։ Դիմումի վերջում նրանք գրում են, որ իրենք կարող են գաղթել Հայաստան, սակայն դա ուրախությամբ կընդունվի Նախիջևանի կառավարության կողմից։ Իսկ իրենք երբեք չեն թողնի իրենց նախնիների գերեզմանները[35]։ Նախիջևանի ադրբեջանական իշխանությունները զենքի առգրավման անվան տակ ստուգումներ էին անցկացնում հայկական գյուղերում, տանում վերջին որսորդական հրացանը, այն դեպքում, երբ ողջ հանրապետությունում տարածված էր բանդիտիզմը[36]։

Ազգային քաղաքականության բնագավառում հայ ազգաբնակչության համար նման խնդիրներ կային նաև Լեռնային Ղարաբաղում, Ադրբեջանի մյուս հայաշատ վայրերում և Վրաստանում։

Ազգային քաղաքականության բնագավառում վիճակը բարդանում էր նաև նրանով, որ փոքրամասնությունների մեծագույն մասին նախկին բնակավայրերում մեծ դժվարությամբ տեղավորելուց հետո Հայաստան էին վերադառնում ուրիշները և պահանջում իրենց ևս տեղավորել։ Իսկ գյուղերում այլևս ազատ տեղեր չկային։ Վաղուց կազմվել և իրագործվել կամ իրագործվում էր հողաշինարարության ծրագիրը։ Օրինակ, Զանգեզուրի տեղական իշխանությունները, հատկապես Գորիսի և Դարալագյազի գավգործկոմները բազմիցս դիմել են վերադասին, որպեսզի վերջինս Նախիջևանի իշխանություններից պահանջի արգելել մուսուլման ազգաբնակչության մուտքը Զանգեզուր[37]։

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ ազգային փոքրամասնությունները, հատկապես ադրբեջանցիները, ամեն միջոցի դիմում էին, որպեսզի իրենց գյուղերի ավելցուկ հողերի վրա ուրիշներ, ոչ մուսուլմաններ չբնակեցվեն, նաև իրենց հարևանությամբ նոր գյուղեր չհիմնվեն[38]։

Ադրբեջանի կառավարությունը, որը սկզբից ևեթ ազգային փոքրամասնությունների նկատմամբ վարում էր ձուլելու քաղաքականություն, Հայաստանում ապրող իր հայրենակիցների միջոցով փորձում էր վարկաբեկել նաև հայոց կառավարությանը։ Այսպես, 1925 թ. Դարալագյազի գավառի մի քանի ադրբեջանական գյուղերի անունից ԽՍՀՄ ԺԿԽ-ի նախագահ Ռիկովին Թիֆլիսում հանձնվում է բողոքագիր, որով Հայաստանի կառավարությունն ամբաստանվում էր հայաստանաբնակ ադրբեջանցիների նկատմամբ վարած իբր խտրական քաղաքականության համար։ Նշվում էին այնպիսի գյուղերի անուններ, օրինակ, Կրսըր Խարաբա և այլն, որոնք երբեք գոյություն չեն ունեցել[39]։ Սահմանամերձ գավառներում ու շրջաններում առաջանում էին հողային

---

34 Նույն անդում։

35 ՀՀ ՆՊՊԿԱ, ֆ. 112, ց. 1, գ. 5, թ. 76։

36 Նույն տեղում, գ. 11, թ. 67—69։

37 Նույն տեղում, գ. 126, թ. 43, 51։

38 Նույն տեղում, թ. 47։

39 Նույն տեղում, գ. 138, թ. 76։

վեճեր, որոնց հետևանքով Հանրապետությունը կորցնում էր հողային տարածքներ[40]։

Չնայած վերոհիշյալ փաստերին, ազգային փոքրամասնությունների մեծագույն մասը վերաբնակեցվեց Հայաստանում, դարձավ նրա լիարժեք քաղաքացին։ Հայաստանի ազգային փոքրամասնությունների կյանքի համար ավելի բնականոն և ապահով պայմաններ էին ստեղծվել։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի ագրոպրոպագանդայի բաժնին կից գործում էր թուրքական սեկցիան[41], իսկ Հայաստանի Կենտգործկոմին կից 1926 թ. ստեղծվեց ազգային փոքրամասնությունների հանձնաժողով՝ իր տեղական մարմիններով[42]։ Փոքրամասնությունների շրջանում անընդհատ լուրջ ուսումնասիրություններ են կատարվել՝ ստուգելու նրանց տնտեսական, քաղաքական, կրթական, մշակութային կյանքը։ Նրանց համար բացվում էին դպրոցներ, պատրաստվում ուսուցչական կադրեր, ուսուցումը և գրագրությունը կատարվում էր մայրենի լեզվով (1924 թ. մայիսի 11-ի որոշումով)[43]։ Հրավիրվում էին ազգային փոքրամասնությունների անկուսակցական կոնֆերանսներ, քննարկում նրանց հուզող խնդիրներ, որոնք անպայմանորեն ուշադրության էին արժանանում Հայաստանի կառավարության կողմից։ Այսպես, օրինակ, 1925 թ. դեկտեմբերի 30—31-ին Շամիրամ գյուղում տեղի ունեցավ Էջմիածնի գավառի եզդիների անկուսակցական համագումարը, որը մի շարք որոշումներ ընդունեց եզդիներին նստակյաց դարձնելու, նրանց կրթամշակութային մակարդակը բարձրացնելու, կենցաղային պայմանները բարելավելու մասին։ Որոշվեց անհանդուրժողականություն դրսևորել թայֆաբազության, բազմակնության, ամուսնության համար պահանջվող գլխագնի և այլ արատավոր երևույթների դեմ[44]։ 1926 թ. մայիսի 23-ին կայացավ համահայաստանյան քրդական I համագումարը, 75 պատգամավորների մասնակցությամբ։ Այն քննարկեց գյուղատնտեսության և կոոպերացիայի, կրթամշակութային, կենցաղային և ընթացիկ հարցեր[45]։

1924 թ. դեկտեմբերի 13-ին Հայաստանի հողաշինարարության աշխատողների անդրանիկ խորհրդակցությունը նշեց, որ հանրապետության սահմաններում ազգային փոքրամասնությունների մեջ ոչ մի հողազուրկ, նաև սակավահող գյուղացի չկա[46]։

1926 թ. Էջմիածնի գավգործկոմը հանգամանորեն հետազոտեց Փոքր Շահրիրար գյուղի հրեաների վիճակը, ծանոթացավ նրանց պահանջներին։ Պարզվեց, որ գյուղի հրեաները 17 տնտեսություն են, 114 անձով, որ նրանք սեփական տներ չունեն, ապրում են վարձով, որ բոլորն էլ ապահովված են հողով։ Հրեաների վիճակի բարելավման նպատակով գավգործկոմը մի շարք միջոցառումներ ձեռնարկեց, հատկացրեց երկարաժամկետ վարկեր[47]։

Մեծ ուշադրություն էր դարձվում նաև փոքրամասնությունների լուսավորության գործին։ Համարյա ամենուրեք գործում էին դպրոցներ, նախադպրոցական և լուսավորական այլ հիմնարկներ, դրանց համար պատրաստվում և վերապատրաստվում էին կադրեր։ 1924 թ. դեկտեմբերին Երևանում իրենց համագումարն անցկացրին ասորի և եզդի ուսուցիչները[48]։ 1924 թ. Երևանի գավառում կար 18 ադրբեջանական, 5 ռուսական, 3 ասորական, 1 հունական, իսկ Էջմիածնի գավառում՝ 2 ադրբեջանական, 1 եզդիական դպրոցներ[49]։ Նույն

40 Նույն տեղում, ց. 2, գ. 1, թ. 63։

41 ՀՀ հասարակական և քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՀՔԿ ՊԿԱ), ֆ. 1, ց. 2, գ. 141, թ. 1։

42 ՀՀ ՆՊՊԿԱ, ֆ. 112, ց. 1, գ. 216, թ. 159։

43 Նույն տեղում, գ. 139, թ. 173—175։

44 Նույն տեղում, ց. 2, գ. 877, թ. 98—99։

45 Նույն տեղում, գ. 21, թ. 97—103։

46 Նույն տեղում, ց. 1, գ. 139, թ. 163։

47 Նույն տեղում, ց. 2, գ. 21, թ. 112։

48 Նույն տեղում, ց. 1, գ. 185, թ. 58։

49 ՀՀ ՀՔԿ ՊԿԱ, ֆ. 1, ց. 4, գ. 141, թ. 20։

1924 թ. Երևանում կար նաև ադրբեջանական մանկատուն, 60 երեխաներով[50]։ 1925—26 ուս. տարում Էջմիածնի գավառում ազգային փոքրամասնությունների համար գործում էր 12 դպրոց, 421 աշակերտներով[51]։ Հայաստանի կառավարության ջանքերով ստեղծվեց քրդական այբուբենը և այլն։

Արխիվային փաստաթղթերը վկայում են, որ միութենական մյուս հանրապետություններում ազգային փոքրամասնությունների հարցերն այդքան արագորեն չէին լուծվում, ինչպես Հայաստանում։ Օրինակ, Վրաստանի կառավարությունը բազմիցս դիմել է Հայաստանին՝ տրամադրելու քրդերեն լեզվով ցուցապաստառներ, խորհուրդների նախընտրական արշավը կազմակերպելու համար։ Հայաստանից Վրաստան են մեկնել նաև քրդերի, ադրբեջանցիների շրջանում աշխատող բժիշկներ և այլ մասնագետներ[52]։

Անտարակույս, կային նաև դժվարություններ, սակայն դրանք այնքան էլ Հայաստանի կառավարության մեղքով չէին։ Օրինակ, չկային ազգային լեզվով դասավանդող ուսուցիչներ, գյուղխորհրդի քարտուղարներ, և այդ գործը կատարում էին մոլլաները, իսկ ադրբեջանցիները, բողոքում էին, որ իրենց ուշադրություն չեն դարձնում։ Նույնը նաև դատարանների հարցում և այլն։

Հայաստանի իշխանությունների վարած մարդասիրական քաղաքականությունը տվեց իր արդյունքները։ Եվ դա առաջին հերթին արտահայտվեց ժողովրդագրական պատկերում։ Զգայիորեն ավելացավ հանրապետության բնակչության թվաքանակը։ Այդ մասին են վկայում 1923 թ. և 1926 թ. մարդահամարների տվյալները։

1. 1923 թ. մարդահամարի տվյալներով հանրապետությունում կային

Հայեր	—	593791	(84,9 %)
Ադրբեջանցիներ	—	54264	(9,9 %)
Ռուսներ	—	17133	(2,1 %)
Քրդեր	—	833	(0,7 %)
Եզդիներ	—	840	(0,8 %)
Հույներ	—	27	(0,45 %)
Ասորիներ	—	4523	(1,2 %)

Սրանք հիմնականում 9 գավառների (Երևան, Ալեքսանդրապոլ, Էջմիածին, Դիլիջան, Լոռի-Փամբակ, Նոր Բայազետ, Զանգեզուր, Դարալագյազ և Մեղրի) տվյալներն են։ Ընդամենը՝ 1057058 մարդ, որոշ տվյալներով նաև 1400000[53]։

2. 1926 թ. մարդահամարի տվյալներով հանրապետության ազգաբնակչության պատկերը հետևյալն է՝[54]

Հայեր	—	743,6 հազ.	(84,5 %)
Ադրբեջանցիներ	—	76,8 հազ.	(10 %)
Ռուսներ և ուկրաինացիներ		23,1 հազ.	(2,6 %)
Քրդեր, եզդիներ	—	15,2 հազ.	(1,7 %)
Ասորիներ	—	2,2 հազ.	(0,5 %)
Հույներ	—	2,9 հազ.	(0,7 %)

Ինչպես տեսնում ենք, բոլոր ազգություններն էլ 1923 թ. համեմատությամբ 1926 թ. նկատելի աճ են ունեցել։ Նշենք նաև, որ բնակչության բնական և մեխանիկական աճի շնորհիվ կարճ ժամանակամիջոցում՝ 1921 թ.

---

50 Նույն տեղում, գ. 150, թ. 37։

51 ՀՀ ՆՊՊԿԱ, ֆ. 112, ց. 3, գ. 355, թ. 124։

52 Նույն տեղում, ց. 1, գ. 413, թ. 8։

53 Նույն տեղում, ց. 3, գ. 334, թ. 6, 59։

54 Նույն տեղում, գ. 377, թ. 51։

վերջերից մինչև 1926 թ. համամիութենական մարդահամարը, Հայաստանի բնակչությունն ավելացավ 22,3 %-ով[55]։

Այսպիսով, 1920-ական թվականների սկզբին Հայաստանից հեռացած ազգային փոքրամասնությունների մեծագույն մասը վերաբնակեցվեց։ 1926 թ. հարցման արդյունքներով Արևելյան Հայաստանից Ադրբեջան և Պարսկաստան արտագաղթած ադրբեջանցիների մոտավորապես 80 %-ը վերադարձել և բնակություն էր հաստատել իր նախկին բնակավայրերում[56]։ Միաժամանակ, վերաբնակների հետ Հայաստան էին գալիս լրացուցիչ խմբաքանակներ, նրանց ազգականները։ Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ ազգային փոքրամասնությունները մասնակից դարձան հանրապետության հասարակական-քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին։

ПЕРЕСЕЛЕНИЕ НАЦИОНАЛЬНЫХ МЕНЬШИНСТВ В АРМЕНИИ (НАЧАЛО 1920-х ГОДОВ)

Э. Г. ГЕВОРКЯН

Резюме

В 1918—1920 гг. в Закавказье к бедствиям войны прибавились межнациональные столкновения и конфликты, в результате которых часть национальных меньшинств, в частности азербайджанцы, покинули Армению. Одновременно большое число армян выехало из Азербайджана.

После советизации Армении началось переселение армянского беженства и национальных меньшинств. Этот процесс протекал в труднейших условиях.

Серьезное беспокойство внушали пограничные вопросы с Азербайджаном и Грузией, тяжелое положение армянского населения в Нахичевани, Нагорном Карабахе, в армянонаселенных районах Азербайджана и Грузии.

Тем не менее правительство Армении предприняло все меры для расселения нацменьшинств в местах их прежнего проживания, обеспечило землей, стройматериалами, жильем, предоставило ссуды. По результатам опроса 1926 года, подавляющая часть покинувших Армению нацменьшинств возвратилась. Большое внимание было уделено их экономическим, политическим , просветительско-культурным проблемам. Заметно выросла численность национальных меньшинств.

55 Նույն տեղում, ֆ. 130, ց. 5, դ. 1353, թ. 1։

56 Նույն տեղում, ց. 6, դ. 197, թ. 37, 48, 49։